հարուստ է Մաճիխելը։ Բայց թէ Մաճիխելի եւ թէ Աշարայի ժողովուրդը վարք ու բարքով այնքան բարբարոս են, որ շատ դժուար է այդ դաւառների խորքերը մտնել եւ ուսումնասիրել առանց վտանգի։ Այս պատճառով շատ դժուար է ընդհանրապէս Ճորոխի ափերը Պալխարից մինչեւ Բաթում ուսումնասիրել. մանաւանդ Մաշիխել եւ Աշարա։ Այս դաւառների ուսումնասիրութեան համար շատ քիչ նիւթ կայ, եղածն էլ կասկածելի է։ Նոյն իսկ ռուսական պաշտօնական ուսումնասիրողները դանդատուել են 1878—1917 տարիներին։

Ժե.

Աշարա կամ Նգերիա։

Ճորոխի վերջին եւ ամենամեծ վտակը Աշարան է, իւր 120 կիլոմետր երկարութեամբ, որ ձգւում է արեւելքից, Զիբուխ-Նարին–Բաշի լեռներից մինչեւ Ճորոխի ափը, Բաթումից 12 կիլոմետր աւելի հարաւ-արեւմուտք։ Այս երկար եւ մինչեւ 20 կիլոմետր լայնութիւն ունեցող Աւազանի միջից անցնում է Աշարա վտակը, որ ընդունում է աջից՝ Գուրիայի լեռներից եւ ձախից Շաւշէտի լեռներից բազմաթիւ մեծամեծ վտակներ, որոնք մեծամեծ սահանքով իջնում են լեռներից, ոռոգում են երկիրը եւ